
**ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՈ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՁԻՆՎՈՐԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մարդկության պատմության վաղ շրջանից սկսած՝ հասարակական կյանքի զարգացման անօտարելի բաղադրիչներից է բռնությունը: Այն իր պարզագույն դրսևորմամբ անգամ բարդ սոցիալական երևույթ է, որի բնույթի և էության մասին հարցերի պատասխանները կարելի է գտնել փիլիսոփայության, իսկ առավել խորությամբ՝ մարդաբանության և հոգեբանության ակունքներում: «Բռնություն» երևույթն առավելապես հետաքրքրություն է ներկայացնում իր արտաքին կազմակերպագործառական հատկանիշներով և զարգացման գործընթացով, որն ազդեցություն ունի զինված ուժերի՝ որպես սոցիալական ինստիտուտի, ինչպես նաև պետությունների ձևավորման վրա: Առավել ընդհանրական մեկնաբանման դեպքում բռնությունը կարելի է դիտել որպես բռնություն կիրառող սուբյեկտի նպատակների իրագործման համար այդ սուբյեկտի կամքի թելադրում մեկ այլ սուբյեկտի, որը կարող է իրականացվել ֆիզիկական ու հոգեբանական ազդեցության, շանտաժի, ակնկալվող շահերը խոչընդոտելու կամ այլ կարգի հնարավորություններ սահմանափակելու միջոցով:

Ըստ Թ. Հոբսի՝ բռնությունը կամ մեկմեկու ոչնչացնելու ունակությունը միակ կարողությունն է, որ մարդկանց իրապես հավասար է դարձնում¹: Անձանց (իրավա)հավասարության լիբերալ-մարդասիրական կարծրատիպերը կոտրող, առաջին հայացքից տարօրինակ այս մեկնաբանությունն իրականում պետությունների ստեղծման երկու տեսությունների հիմնավորման լուրջ փաստարկ է: Այն հիմք է նախապատրաստում «Բռնության տեսությանը» բնորոշ անհատական անվտանգությունից «հասարակական դաշինքի» միջոցով կոլեկտիվ անվտանգության անցնելու համար, որը ժամանակակից պետության հիմնական գործառույթներից է: Պետք է նկատել, որ, չնայած իր առերևույթ բացասական ընկալմանը, բռնությունը կիրառական մակարդակում կարող է դրական նրբերանգներ ստանալ, եթե, օրինակ, ուղղված է անհավասարության և անարդարության վերացմանը կամ իրավունքների վերականգնմանը: Սա ընդունելի վարքագիծ է նաև ժողովրդավարական արժեհամակարգ ձևավորելու փորձերի համար, քանի որ բռնությունն է ընկած իրական կամ թվացյալ ժողովրդավարությունների ձևավորման և պահպանման հիմքերում: ԱՄՆ քաղաքացիական պատերազմը և անկախացումը, Եվրոպական բուրժուադեմոկրատական հեղափոխությունները, Երրորդ աշխարհի ապագաղութացումը, ԽՍՀՄ փլու-

¹ Տե՛ս Caforio G. (Ed.), Handbook of the Sociology of Military, New York, 2003, էջ 8:

զումը, անկախության ձեռքբերումը և մանատիպ այլ երևույթներ այս կամ այն չափով հենց բռնության արդյունք են: Ուստի, «բռնության տեսության» տեսանկյունից մեկնաբանելով զինված ուժերի ձևավորումը և կայացումը՝ ամենևին նպատակ չենք հետապնդում այդ գործընթացը ներկայացնելու որպես հասարակության զարգացման բացասական կողմ: Ընդհակառակը, կարծում ենք, որ դա մարդկության պատմության առաջընթացի օրինաչափ դրսևորում է:

Ընդհանրացնելով պետությունների ստեղծման «բռնության տեսության» կողմնակից սոցիոլոգների (Գումպլովիչ, Կաուցկի, Դյուրինգ և այլք) մոտեցումները՝ «բռնության տեսությունն» ընդունված է բաժանել արտաքին և ներքին ուղղությունների²: *Ներքին բռնությունը հասարակական խմբի ներսում հակադիր խմբերի ձևավորման հետևանքով մի խմբի կողմից մյուսին ճնշելու, նվաճողներ և նվաճվողներ ձևավորելու, մեծամասնության կողմից փոքրամասնությանը շահագործելու գործընթացն է, որն ուղղված է արտադրական միջոցների տիրապետմանը: Ինչ վերաբերում է արտաքին բռնությանը, ապա նվաճողական պատերազմների ճանապարհով այլ ցեղերի ստրկացման, հողերի զավթման, տուրքերի սահմանման և բռնի ուժով հավելյալ միջոցների ստացման շնորհիվ քոչվորությունից անցում է կատարվում նստակյացության, որի հիման վրա էլ ձևավորվում են արդի պետությունների նախատիպերը: Այսինքն՝ բռնության միջոցով ծագում են սեփականությունը, դասակարգերը և պետությունը: Ընդ որում, պատմական փորձը բազմիցս ապացուցել է «բռնության տեսության» գոյությունը նվաճողականությամբ առաջնորդվող պետականությունների հարուստ փորձով (Ն. Խրոպանյուկը օրինակ է բերում Ոսկե Դորդան, սակայն, մեր կարծիքով, դա կարող է տարածվել բոլոր կայսրությունների վրա)³:*

Բռնությունն ընկած է նաև հասարակության զինվորական բաղադրիչի ձևավորման հիմքում: Ավելին, բռնությունը և հասարակության զինվորական բաղադրիչը փոխկապակցված են, քանի որ հատկապես նախնադարյան համայնական հասարակարգում խմբերի տարբերակման հստակ չափանիշների բացակայության պայմաններում ոչ թե բռնությունն է բնորոշ եղել զինվորականությանը, այլ, պատկերավոր ասած, հենց «զինվորականությունն» է բնորոշ եղել բռնությանը: Այսինքն՝ նրանք, ովքեր ի վիճակի են եղել բռնություն կիրառելու, հասարակության մեջ ստանձնել են զինվորական խմբի դերը: Եվ եթե նկատի ունենանք, որ նախնադարյան հասարակարգում արական բնակչության գրեթե բոլոր ներկայացուցիչներն այս կամ այն չափով բռնություն կիրառելու ունակություն և հակվածություն են ունեցել, թեկուզ որպես ինքնապաշտպանական կամ խմբային (տեսակի) պաշտպանության բնագո, ապա կարող ենք նաև պնդել, որ ողջ հասարակությանը բնորոշ է եղել «զինվորականությունը» կամ զինվորական գործը: Ուստի, հասարակության զարգացման ու նախապետությունների ստեղծման գործում վճռորոշ է եղել բռնության և զինվորական դասի դերը:

Դա մասամբ հաստատվում է նաև սոցիոլոգիայի դասական Օգյուստ Կոնտի մոտեցումներում: Ըստ Կոնտի՝ համատեղ (ասոցիատիվ) կյանքի

² Տե՛ս **Нерсесянц В. С.** Общая теория права и государства. М., 2012, էջ 224-226, **Ն. Խրոպանյուկ**, Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997, էջ 51-54:

³ Տե՛ս **Ն. Խրոպանյուկ**, նշվ. աշխ., էջ 53:

զինվորական դրսևորումները նույնքան հին են, որքան բանական մարդը (homo sapiens), քանի որ մարդու ստեղծած առաջին գործիքները զենքերն են, իսկ խմբում ստեղծված առաջին իշխանության կրողը հենց զինվորական առաջնորդն է⁴: Թեև վիճելի է մարդու ստեղծած առաջին գործիքները կամ նախնադարյան հասարակարգում իշխանություն կրողներին անվերապահ զինվորական համարելը, քանի որ գործիքները թերևս ունիվերսալ գործառնություն են ունեցել, իսկ առաջնորդները՝ սոցիալ-քաղաքական զարգացման պարզագույն մակարդակի պատճառով գործնականում անձնավորել են հոգևոր, տնտեսական և զինվորական իշխանության համախումբը, սակայն փաստ է, որ բռնությունը եղել է սոցիալական միկրոխմբերի ներսում և դրանց միջև խնդիրների լուծման, կենցաղատնտեսական պայմանների բարելավման միջոց: Յետևաբար չի կարելի ժխտել հասարակության կազմակերպված զինվորական բաղադրիչի ձևավորման նախադրյալների առկայությունն անգամ պարզունակ հասարակարգերում:

Նախնադարյան համայնական հասարակարգում զինվորական բաղադրիչի ձևավորման ու պետությունների կայացման վրա այդ գործընթացի ազդեցության հետաքրքիր բացատրություն է տալիս Է. Ս. Դոլմանը⁵, համաձայն որի՝ նախնադարյան համայնական հասարակարգի հավաքչական-որսորդական բնույթը սկսում է փոփոխվել համայնքի անդամների թվի աճի և սննդի ծավալները չբավականացնելու հետևանքով: Համայնքում սկսում է կարևորվել սնունդ հայթայթող որսորդների դերը: Նրանք, արագորեն հարմարվելով նոր պայմաններին, հատուկ հարգանքի և սոցիալական դիրքի են արժանանում և իրենց հիմնական պարտականություններից (որսորդությունից) բացի՝ մասնագիտանում են նաև ցեղից դուրս (այլ ցեղերից խլելու միջոցով) սնունդ հայթայթելու հարցերում: Սննդի պակասը լրացնելու նպատակով միաժամանակ զարգանում են նաև ֆերմերային տնտեսությունները, սակայն արդեն կարիքների բավարարման մշակույթի մաս կազմող և «որսորդների» պայմանական գործառույթ հանդիսացող բռնությունը վերածվում է իրական սպառնալիքի ֆերմերային տնտեսությունների գործունեության համար: Իրենց տնտեսությունները ունձգություններից պաշտպանելու համար ֆերմերները ստիպված պետք է իրենց ժամանակի մոտ 75%-ը ծախսեին գյուղատնտեսական աշխատանքի հետ չկապված գործունեության վրա (պահակային ծառայություն, արտադրանքի տեղափոխում և պաշտպանություն): Դոլմանը դիտարկում է 100 ֆերմերային տնտեսություններից բաղկացած համայնքի անվտանգության ապահովման մոդելը, որը հիմնվում է տնտեսական նպատակահարմարության, ակնկալվող ընդհանուր եկամտի ու անվտանգության ապահովման պահանջների վրա: 100 ֆերմերային տնտեսություններից յուրաքանչյուրը գյուղատնտեսական աշխատանքի հետ չկապված ու անվտանգության ապահովման գործունեության վրա իրենց ժամանակի 75%-ը ծախսելու փոխարեն իրենցից 25-ին վերապահում են անվտանգության ապահովման գործառույթ, պայմանով, որ իրենք հավասար կերպով կապահովեն այդ խմբի տնտեսական կարիքները: Այսպիսով, եթե նախկինում 100 ֆերմեր-

⁴ Տե՛ս Caforio G., նշվ. աշխ., էջ 8:

⁵ Տե՛ս Dolman E. C. The warrior state. How military organization structures politics? New York 2004, էջ 15-22:

ներ գործունեություն էին ծավալում 25% ընդհանուր արդյունավետությամբ, ապա այժմ 75 ֆերմերներ աշխատում են 100% արդյունավետությամբ, և գրանցվում է ընդհանուր արտադրանքի ծավալի աննախադեպ աճ. 2500 պայմանական միավորից (100 ֆերմեր x 25% արդյունավետություն) 7500 պայմանական միավոր (75 ֆերմեր x 100% արդյունավետություն): Բացի այդ, երաշխավորվում է ստեղծված բարիքի անվտանգ պահպանությունը, քանի որ 25 նախկին ֆերմերներն իրենց ոստիկանական անվտանգային նոր գործառույթներն անընդհատ են իրականացնում, իսկ ազատ ժամանակի մի մասն անցկացնում են վարժանքների, մարտական կարողությունների զարգացման վրա:

Այս մոդելն իր հաշվարկների չափազանցվածությամբ ու մոտավորությամբ հանդերձ՝ շատ տպավորիչ է, հատկապես որպես պետությունների ստեղծման «հասարակական դաշինքի» տեսությունից աստիճանաբար «բռնության տեսության» անցման ձև: Փաստորեն, համայնքի ներքին և արտաքին անվտանգության ապահովման նպատակով, տնտեսական շահերի պարզագույն հաշվարկի միջոցով որոշվում է համայնքի գործառույթների մի շրջանակ (պայմանականորեն անվանենք ռազմական) պատվիրակել փոքր խմբի, որը փաստացի վերածվում է լեգիտիմ (առնվազն համայնքի ներսում) բռնության հաստատության: Բռնության գործառույթ ստանձնելու հետևանքով փոքրամասնությունը ժամանակի ընթացքում անվտանգության ապահովման դիմաց մեծամասնությունից պահանջում է ավելի մեծ միջոցներ, իսկ մեծամասնությունն ի վիճակի չի լինում մերժելու, քանի որ չունի պատշաճ ռազմական կարողություններ ու հմտություններ դիմագրավելու ճնշմանը: Սա կարելի է դիտարկել որպես պետությանը բնորոշ հարկային ապարատի ձևավորման նախնական մոդել, որը բնականաբար ժամանակի ընթացքում քաղաքակրթվել է: Տիրապետելով բռնության գործիքներին՝ սկզբում բացառապես անվտանգության ապահովման գործառույթ ունեցող փոքրամասնությունը սկսում է իր կամքը թելադրել մեծամասնությանը՝ աստիճանաբար վերածվելով քաղաքական էլիտայի: Սա զինված ուժերի քաղաքական ներգրավման պարզունակ ու սկզբնական ձև է, որը նաև պետությունների ձևավորման շարժիչ ուժ է:

Այս մոտեցումը զարգացնում է ամերիկացի քաղաքագետ Չ. Թիլլին «գիշատիչ պետություն» կամ «ավազակապետություն» («ռեկետոր պետություն») հայեցակարգում, որտեղ մանրամասն վերլուծվում է «արևմտյան» տիպի պետությունների ձևավորման գործընթացը, որում վճռորոշ նշանակություն է տրվում պատերազմների վարմանը: Պետություններն իրենց գոյությունն ապահովում են հասարակությանն արտաքին և ներքին սպառնալիքներից պաշտպանելու միջոցով, այն դեպքում, երբ իրենց հանցավոր, ագրեսիվ գործունեությամբ հենց իրենք են դառնում այդ սպառնալիքների դրդապատճառ՝ չափազանցելով արտաքին պատերազմի վտանգը, ոչ իրավաչափ ներքին գործունեությամբ բռնություններ կիրառելով իրենց իսկ հասարակության նկատմամբ: Ընդ որում, այդ «պաշտպանությունը» հասարակությանը պարտադրվում է վճարի դիմաց, ինչը բնորոշ է կազմակերպված հանցավոր խմբերի գործունեությանը, որոնք, իրենք իսկ վտանգ հանդիսանալով ձեռնարկատիրոջ համար, գումար են

պահանջում «տանիք» կանգնելու և այլ հանցավոր խմբերից պաշտպանություն ապահովելու համար: Այս պարագայում պետությունն իրեն դրսևորում է որպես առավել կենսունակ ու կազմակերպված «հանցավոր խումբ», որը մրցակցային դաշտից դուրս է մղում այլ խմբերի և այդպիսով մենաշնորհում բռնության ինստիտուտը: Իսկ պետության թուլացման դեպքում ակտիվանում են լեզիտիմ բռնության մենաշնորհի հավակնող այլ ուժեր: Այս իրավիճակն այս կամ այն չափով բնորոշ է յուրաքանչյուր պետության:

Մեր կարծիքով, պետության կողմից բռնության մենաշնորհումն իրականացվում է առավել մեծ վտանգ ստեղծելու սպառնալիքի կարողության շնորհիվ (օրինակ՝ մեծածավալ պատերազմի վտանգով հասարակության ահաբեկում, բռնություն կիրառող խմբերից հասարակության անվտանգության ապահովման անհարկի շահարկում և այլն), իսկ այդ կարողությունն իր հերթին ժամանակի ընթացքում առավել կատարելագործվում է հասարակությունից ավելի ու ավելի շատ միջոցներ կորզելու միջոցով: Այսինքն՝ առկա է փոխկապվածություն չափազանցված վտանգի մեծության և հասարակությունից մեծ միջոցներ կորզելու միջև: Հարկ է նկատել, որ իրականում այս սկզբունքն է ընկած ժամանակակից գրեթե յուրաքանչյուր պետության գործունեության հիմքում, այն տարբերությամբ միայն, որ եթե պետությունների ձևավորման սկզբնական շրջանում այն հանդես էր գալիս «պետությունն ընդդեմ հասարակության» ձևաչափով, ապա ներկայիս ժողովրդավարություններում դրսևորվում է «զինված ուժեր – պետական բյուրոկրատիա» շահերի բախման համատեքստում և պայմանավորված է զինված ուժերի համակարգային կորպորատիվիզմով կամ դրա առավել բացասական դրսևորումը հանդիսացող զինվորաքաղաքացիական հարաբերությունների հավասարակշռությունը հոգուտ զինվորականության խախտող քաղաքական-տնտեսական շահերով:

Ընդհանրապես, սոցիալական գիտությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, անկախ դարաշրջանից, բռնությունն ընկած է պետությունների գոյատևման հիմքում, ուղեկցում է դրանց զարգացմանը և դրսևորվում է արտաքին վտանգներից պաշտպանվելու, ինչպես նաև ազդեցության նոր ոլորտներ ձեռք բերելու նպատակով հարձակվելու ու ներքին երկպառակությունները ճնշելու և կանխարգելելու համար: Այլ կերպ ասած՝ պետության միասնականության ապահովման համար ձևավորվում են կազմակերպված ուժեր, որոնց վերապահվում է բռնության գործառույթը: Եթե հաշվի առնենք, որ Մաքիավելու և որոշ չափով նաև Հոբսի ստեղծագործական գործունեության տարիները համընկնում են իրենց երկրներում մոլեզմող նվաճողական ու քաղաքացիական պատերազմների ժամանակահատվածին, ապա Մաքիավելու «Տիրակալին» բնորոշ գերռացիոնալիստական բնույթը, կամ Հոբսի՝ ամեն ինչից, այդ թվում՝ նաև օրենքից վեր կանգնած և հասարակական դաշինքի հիման վրա ստեղծված «Լևիաթան-պետության» բռնության հատկանիշների դրսևորումը կարելի է համարել այդ ժամանակների Եվրոպային բնորոշ բացարձակապետության արդարացման տեսական հիմք:

Սակայն եական նշանակություն ունի բռնության լեգիտիմության սահմանների որոշումը՝ որպես պետության (քաղաքականության հիմնական սուբյեկտի) գործառնության շրջանակի սահմանման ու նաև սահմանափակման նախապայման: Դա հատկապես վառ է արտահայտված արդյունաբերական պետության մոդելի Մաքս Վեբերի սահմանման մեջ, համաձայն որի՝ պետությունը մարդկային հանրույթ է, որը հաջողությամբ իրականացնում է որոշակի տարածքում լեգիտիմ ուժ կիրառելու մենաշնորհը⁶: Ուստի, Վեբերի սահմանման մեջ «լեգիտիմություն» եզրույթի կիրառումը, ի տարբերություն վաղ շրջանի հեղինակների (Մաքսիվելի, Յոնս) սահմանումների, մենաշնորհման պայմաններում սահմանափակում է պետության կողմից բռնության անվերապահ կիրառման հնարավորությունները: Սակայն վերադառնալով Թիլլիի «ավազակապետություն» հայեցակարգին, հարկ ենք համարում նշել, որ նա իրավացիորեն դժվարանում է տալ բռնության կիրառման լեգիտիմության և ոչ լեգիտիմության սահմանները հատկապես պետականաստեղծման վաղ շրջաններում, քանզի կարծում է, որ կենտրոնացվածության բացակայության պատճառով անգամ ավազակախմբերն ու ծովահեններն էին բռնության կիրառման լեգիտիմ իշխանություն՝ պատերազմների կամ ներքին կոնֆլիկտների ընթացքում համագործակցելով թագավորական իշխանության հետ և որոշ դեպքերում անդամակցելով զինված ուժերին: Կազմակերպված, միասնական կառավարվող զինված ուժերի բացակայության, դրանց թիկունքն ապահովելու հարցերում անկազմակերպվածության պայմաններում պատերազմների ժամանակ զինված ուժերը համալրած զինվորները, օգտվելով թագավորական իշխանության հովանավորությունից, զբաղվում էին իրենց պահանջումների բավարարման անօրինական գործունեությամբ, թալանով, իսկ զորացրումից հետո շարունակում էին այդ նույն գործունեությունը, բայց այս անգամ արդեն առանց թագավորական իշխանության աջակցության: Ընդ որում, ավազակախմբերի ու թագավորական իշխանությունների կապը, զինծառայության ապակենտրոնացված և ինքնաբավ տեսակը մանրամասնորեն նկարագրված են նաև ժամանակի գեղարվեստական գրականության մեջ⁷:

Այսպիսով, եթե ընդունենք, որ միջնադարյան Եվրոպայի բավականին մեծ ժամանակահատվածին բնորոշ իշխանության ապակենտրոնացվածությունը խոչընդոտում է բռնության լեգիտիմության սահմաններն ու դրա դրսևորման ձևերը որոշելուն՝ դրանով իսկ դժվարացնելով նաև զինված

⁶ Տե՛ս **Ghani A., Lockhart C.** Fixing failed states. A framework for rebuilding a fractured world, Oxford University Press, 2008, էջ 116:

⁷ Օրինակ՝ Ա. Դյունա հոր «Երեք հրացանակիրները և Դ՛վրտանյանը» վեպում նկարագրվում է, թե ինչպես հեռարշավի մեկնելու պատրաստվող հրացանակիրները ստիպված են զանազան միջոցներով հոգալու իրենց թիկունքի ապահովման հարցերը: Կան «Նավապետ Բլադի ողիսականը» վեպում բանտից փախուստի դիմած նախկին կալանավորը նախ զբաղվում է ծովահենությամբ, ապա վերածվում է թագավորական բարձրաստիճան պաշտոնյայի: Թիլլին իր հերթին անդրադարձ է կատարում կիսաառասպելական Ռոբին Յուդին և նրա հնարավոր ազդեցությանը Անգլիայում թագավորական իշխանության վերականգնման գործին: Այս օրինակները չէին կարող գոնե մասամբ չհամապատասխանել իրենց ժամանակի սոցիալ-քաղաքական իրավիճակին, ուստի դրանցում արտացոլված խնդիրները կամ զարգացումները որոշ չափով օժանդակում են տեսական նյութի հարստացմանը:

ուժերի՝ որպես սոցիալական ինստիտուտի կայացման գործընթացի հստակեցումը, ապա անհրաժեշտ է ապավինել «ազգային անվտանգություն» եզրույթի ուսումնասիրությանը՝ որպես ներքին և արտաքին գործունեության հստակեցման միջոց: Այստեղ հատկապես կարևոր է դառնում 1648 թ. սկիզբ առած Վեսթֆալյան համակարգի ձևավորման գործընթացի էվոլյուցիան: Վեսթֆալյան հաշտության գործընթացը, ուղղված լինելով ներքին գործերին չմիջամտելու (հիմնականում՝ կրոնական) միջազգային իրավաքաղաքական սկզբունքի ամրագրման, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների տարանջատման միջոցով կանխատեսելի ու հնարավորինս խաղաղ միջազգային աշխարհակարգի ստեղծմանը, սկզբնական շրջանում դեռևս հստակ պատասխան չէր տալիս, թե որտեղ են սկսվում և ավարտվում պետության «ներքին գործերը»: Անգամ ավատատիրական մասնատվածության վերջին շրջանում կենտրոնական իշխանության սիմվոլիկ կրողները (թագավոր, գլխավոր իշխան և այլն) պատերազմ վարելիս հաջողություն կարող էին ակնկալել միայն այն դեպքում, երբ ստանում էին նաև տեղական իշխանությունների աջակցությունը: Իսկ վասալները կամ տեղական իշխանությունները, ելնելով իրենց շահերից, միշտ չէ, որ պատրաստակամորեն սատարում էին կենտրոնական իշխանությանը, ինչն էլ պատճառ էր դառնում նրանց միջև լարվածության աճի: Վեսթֆալյան համակարգի ստեղծման սկզբնական փուլը, հնարավորինս սահմանափակելով պատերազմների կրոնաքաղաքական բռնի ազդեցության հետևանքները, այնուամենայնիվ պատշաճ սոցիալական հենքի բացակայության պատճառով խարսխված չէր անվտանգության ազգային-տարածքային ընկալման վրա: Այսինքն՝ մասնատվածության պայմաններում հստակ ուրվագծված տարածքային սահմանների, ազգային ինքնագիտակցության բացակայության պատճառով բռնության լեգիտիմությունը կենտրոնական իշխանության համաձայնությամբ, իսկ շատ հաճախ նաև առանց դրա, ապալեզալացվում էր այլ մանր ուժային կենտրոնների, և յուրաքանչյուր քիչ թե շատ ինքնաբավ դերակատար, առաջնորդվելով տնտեսական, սոցիալական, քաղաքական կամ այլ շահերով, կարող էր իրեն վերապահել անվտանգության ապահովման գործառույթը, որն իրականացվում էր հասարակության տարբեր շերտերի ներգրավմամբ, որոնք ձևավորում էին քվազիգինվորական հասարակության մոդել: Սա, անշուշտ, խոչընդոտում էր ամուր կազմակերպված իշխանության նաև դրա միջոցով, կենտրոնացված պետությունների ձևավորմանը, իսկ անվտանգության ապահովումը կրում էր նեղ խմբային բնույթ: Հատկանշական է, որ այս պատմական փուլում հերթական անգամ արդարացվում է Հոբսի՝ բացարձակապետություն ստեղծելու գաղափարը, որը մարդու «բնական վիճակին» բնորոշ անիշխանությունը կանխարգելելու համար ընդունելի էր համարում անձնական անվտանգությունը երաշխավորող պետության մոդելի ստեղծումը, քանի որ չկար այլընտրանք գերիզոր պետության համար, որն ի վիճակի կլիներ հաղթահարելու մարդու «բնական վիճակին» բնորոշ անենաթողության հետևանքները:

Այս իրավիճակին շատ ճշգրիտ բնորոշում են տալիս անվտանգագետներ Բերրի Բյուզանը և Լենե Յանսենը⁸, որոնք առաջադրում են միջնադարյան պետություններին բնորոշ կրոնական ու քաղաքական «համընկնող իշխանությունների», կառավարման բազմաշերտ հիերարխիկ կառուցվածքի և դրան փոխարինող ազգայնականության, ինքնավարության (սուվերեն) և տարածքայնության վրա հիմնվող ժամանակակից պետությունների հայեցակարգը: Ըստ այս հայեցակարգի՝ մասնատվածության, այսինքն՝ կազմակերպված իշխանության բացակայության պայմաններում միջնադարյան պետություններում գերիշխում էր քաղաքական և կրոնական իշխանությունների համընկնմամբ կառավարվող հասարակարգ, որն ուներ նաև մեծ տարածք զբաղեցնող կայսրություններին բնորոշ վերից վար (կայսրության կենտրոնից մինչև գյուղական ստորին օղակ) կառավարման լիազորությունների ենթաբաժանման համակարգ: Նրանց կարծիքով՝ ազգայնականության ձևավորման համար հիմք են ծառայում ֆրանսիական և ամերիկյան հեղափոխությունները, որոնք ժամանակի լուսավորականության ազդեցությամբ առաջ են քաշում հավասարության, ազատության, եղբայրության գաղափարները, որոնք իրենց հերթին նպաստում են ներհասարակական հիերարխիկ կառուցվածքին փոխարինող «ժողովրդական ինքնավարության» (պոպուլյար սուվերենություն) ընկալմանը, որն արտահայտվում է միասնականության, ազգային ինքնագիտակցության և ազգային-հոգևոր այլ կապերի ամրապնդմամբ:

Ամփոփելով վերն ասվածը՝ կարծում ենք, որ բռնությունն իր խմբային դրսևորմամբ նպաստում է այսօրեական ընկալմամբ զինված ուժերի ձևավորմանը և միաժամանակ դրա անփոփոխ գործառույթն է, որին տրամաբանորեն ուղեկցում է նաև պետությունների ձևավորումը: Ընդ որում, այսպես կոչված «արևմտյան» պետականաշինության զարգացման տեսանկյունից բռնությունը չի հակադրվում այդ գործընթացի առաջմ վերջին փուլ հանդիսացող ժողովրդավարական արժեհամակարգին, այլ ընդհակառակը, որոշ պայմանների առկայության դեպքում վերածվում է դրա լեգիտիմ պահպանի, ինչուև առանձնահատուկ դեր է վերապահված զինված ուժերին: Մասնավորապես, կազմակերպված և լեգիտիմ բռնությունը կարևորվում է առաջին հերթին հասարակարգի պաշտպանության գործառույթի հետ իր փոխկապվածությամբ:

Սակայն, հասարակության զարգացման տեմպերին զուգընթաց՝ փոխվում են նաև կազմակերպված խմբային բռնության դրսևորման ձևերը, իսկ հասարակության սոցիալ-քաղաքական կազմակերպման հետևանքով առանձնացվում են հատուկ ինստիտուտներ, որոնց ապալեգալացվում է բռնության կիրառման գործառույթը: Ընդ որում, հասարակության զարգացման աստիճանից ելնելով, փոփոխության է ենթարկվում ու ճյուղավորվում նաև բռնության ինստիտուտի գործառութային շրջանակը՝ ճյուղավորվելով ըստ համապատասխան սոցիալ-քաղաքական ինստիտուտների: Այս համատեքստում մեթոդական խնդիր է դառնում պարզել, թե բռնության ինստիտուտը որ դեպքում է դառնում լեգիտիմ, ինչպիսի

⁸ Տե՛ս **Buzan B., Hansen L.** The evolution of International Security Studies, Cambridge, 2009, էջ 21-31:

Ճյուղավորման է ենթարկվում, և որ մասով է վերածվում զինված ուժերի գործառույթի: Դա անմիջական կապ ունի ներքին և արտաքին բռնության տարանջատման, բռնության և իշխանության փոխհարաբերությունների, ինչպես նաև լեգիտիմ բռնության միջոցով հասարակարգի ապահովման հետ: Հատկապես կարևոր նշանակություն ունի ներքին և արտաքին բռնության տարանջատման գործոնը, քանի որ զինվորաքաղաքացիական հարաբերությունների համատեքստից այն դուրս է բերում ներքին քաղաքական բռնության գործիք հանդիսացող ոստիկանական և որոշ դեպքերում ազգային անվտանգության ուժերին՝ այդպիսով ազատելով ուսումնասիրության դաշտը անհարկի բարդացնող հարցերից: Այս գործառույթային բաժանունը սերտորեն կապված է զինված ուժերի՝ որպես առանձնահատուկ սոցիալ-քաղաքական հաստատության հատկանիշների հստակ սահմանման անհրաժեշտության հետ: Բռնության ինստիտուտի և զինված ուժերի սոցիալ-քաղաքական հաստատության զարգացման դասական դարձած այս մոդելին առավել համապատասխանում են արևմտյան պետությունների զինված ուժերը, որոնց կայացման բնորոշիչներից է զինվորական մասնագիտության ու արհեստավարժության առաջացումը՝ որպես պրոֆեսիոնալ բանակի ձևավորման հենք:

Այսպիսով, բռնությունը և զինված ուժերը տարբեր դարաշրջանների մտածողների ուսումնասիրություններում առանցքային նշանակություն են ունեցել և անգամ եղել են պարտադիր ճանաչողության ոլորտ հասարակության սոցիալ-քաղաքական զարգացումները կանխատեսելու համար: Այս մոտեցումները վեր հանելը մեզ հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմելու պատմական հոլովություն հասարակության զինվորական բաղադրիչի, դրա հիման վրա զինված ուժերի ձևավորման ու հասարակական-քաղաքական դերի դինամիկայի վերաբերյալ, որն անհրաժեշտ պայման է ռազմական սոցիոլոգիայի մաս հանդիսացող զինվորաքաղաքացիական հարաբերությունների խորքային ընկալման ու մեկնաբանման համար:

АЛЕКСАНДР АВETИСЯН – *Роль насилия в становлении социального института вооруженных сил и интерпретации военно-гражданских отношений.* – В статье исследуется роль насилия в становлении государства, а также в реализации государством таких своих функций, как обеспечение безопасности и управление обществом. В частности, насилие лежит в основе вооруженных сил как социального института. Но в руках нелегитимных элит оно может обратиться против общества и отдельных социальных групп. Следовательно, правом на насилие должны обладать лишь такие социальные институты, как вооруженные силы и силы правопорядка. Это позволит избежать манипуляции правом на насилие со стороны незаконных групп, в частности криминальных элементов, и создать необходимую систему сдержек и противовесов между гражданскими и силовыми компонентами государства и общества.

ALEKSANDR AVETISYAN – *The Role of Violence in Formation of Armed Forces as a Social Institution and Interpretation of Civil-Military Relations.* – The article seeks to identify social theories addressing direct conjunction between the vio-

lence and development of state-building process. The violence in its organized form is perceived both as a driving force of state-building process and as land marking characteristic of state. The state permanently fights out the “right of violence” from hands of other social groups and promotes a proper mechanism to hold that during the entire social history. However, based on historical experience it becomes obvious that monopolization of the organized violence even by the state itself can be dangerous for the society, hindering development, and bringing to consolidation of violent force into the hands of “wrong” elites. Thus, it should be delegated to special law enforcement institutions (like armed forces and police) having necessary skills, structure and functional capacities, in order to avoid seizure and manipulation of violence by out-of-law social groups, as well as creating productive mechanism of checks and balances between civilian and military components of the state and society.